

ՎԱՆԵՑԻՆ

Աստուած, երկու Յրեայ, մէկ ամբողջ Յայ եւ կէս Զիւրտ իրար խառնելով, ստեղծած է Վանեցին:

Ստեղծած է՝ գլուխը տափակ ու միտքը սուր:

Տէրը երգիչ ստեղծած է Վանեցին, սակայն, փոխանակ անոր կոկորդին մէջ սոխակ մը դնելու, սխալմամբ ագռաւ մը խոթած է: Վանեցին իր կոկորդի ագռաւը իբր սոխակ յաջողած է ծախել, քանի մը անգամ: Այդ պատճառով ալ Աստուած իր սխալը չէ դարմանած:

Երկնաւոր հայրը Վանեցիին առոգանութեան տուած է եգական բան մը. Վանեցին խօսած ատեն, կարծես ունի բերնին մէջ տառեխ ձուկ մը, իսկ իր կոկորդին մէջ՝ ճանկրտող կատու մը:

Երբ կը խօսի բարկացած, կարծես Վանայ ծովն է, որ փոթորկած է ու կլլած Աղթամար կղզին, վանքովը ու հաւերովը միասին: Վանեցին ամէն բան կրնայ կեղծել, սակայն ոչ ուրիշին առոգանութիւնը: Ոչ ոք ալ չի կրնար կեղծել Վանեցիին առոգանութիւնը:

Ապուշ Վանեցի մը (հագիւ մէկ քանի հատ ծնած) կրնայ խաբել հարիւր սատանայ: Խելացի Վանեցի մը կրնայ սառոյցը իբրեւ կրակ ծախել: Տակաւին չէ ծնած Վանեցի մը, սակայն, որ կարենայ խաբել... հայրենակից մը:

Վանեցիին սիրտը ոսկի, հոգին ոսկի, աստուածը ոսկի է: Ան կը բանի կամ ոսկիի տակ, կամ ոսկիի վրայ:

Վանեցիին քսակը գոց է, սակայն, սեղանը՝ բաց: Ձեռքը գոց է, բերանը՝ բաց: Գլուխը գոց է, ճակատը՝ բաց: Վանեցիին ականջը գոց է, սակայն, աչքը շատ բաց:

Վանեցին առեւտրական է, խոհարար է, ոսկերիչ է, խաչավաճառ է: Ամէն Վանեցի, սակայն, կամ յեղափոխական է եւ կամ մտաւորական: Յաճախ՝ երկուքը միասին: Իւրաքանչիւր յեղափոխական հերոս է, իւրաքանչիւր մտաւորական ալ՝ գրող:

Վանեցին գրելու համար երբ ծածկանուն գործածէ, գրեթէ անպայման «Վան» բառը կամ վանկը կը դնէ իր ստորագրութեան մէջ: Օրինակներ. Սօս Վանի, Վահան Վանիկ, Արտաշէս Վանարեան, Ռոտանիկ Վանիտէ, Վարդան Վաննօ, Աշոտ Վանդար, Խորէն Սիրվան,